

ԻԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Համալսարանի **Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի** դեկանատի **մասնագետի** մեկ տեղի համար:

Աշխատանքի նկարագրություն և պարտականություններ.

- Կատարել ֆակուլտետի դեկանի հանձնարարությունները
- Օժանդակել դեկանատի ընթացիկ աշխատանքներին
- Ապահովել դեկանատի փաստաթղթավորումը և գործավարությունը:

Պահանջվող որակավորումներ.

- Բարձրագույն կրթություն /մասնագիտական կրթությունն առավելություն է/
- Համակարգչային կայուն գիտելիքներ և կարողություններ (Microsoft Word, Excel, PowerPoint),
- Հայերենի սահուն իմացություն, ռուսերենի և անգլերենի իմացությունն առավելություն է:

Հավակնողները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում ռեկտորի անունով.
- Ինքնակենսագրություն (CV).
- Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները.
- Անձնագրի պատճենը.
- Լուսանկար 1 հատ.
- Աշխատանքային գրրքույկի պատճենը առկայության դեպքում:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝
սույն հայտարարության հրապարակման
օրվանից մինչև սեպտեմբերի 20-ը:

Մրցույթը կկայանա սեպտեմբերի 23-ին ժամը 11⁰⁰:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին հասցեն՝ ք. Երևան, Խանջյան 5, 214 սենյակ, հեռ՝ 597084:

10.09.2020 թ.